

տայ, եւ իբրեւ Առաջնորդ կը զըկէ Արծաթահանք:

Էջմիածնէն անուանուած Պետրոս Առաջնորդն արդէն քանի մ'օր յառաջ Արծաթահանք մտած էր, երբ հասաւ Գէորգ Եպ. եւ իր «Ֆէրման»ին զօրութեամբն դուրս հանել տուաւ Պետրոս վ.ը: Յակօք Կաթողիկոս երբ զայս կը լսէ, կը բանադրէ Գէորգ Եպս.ը եւ կը լուծէ եպիսկոպոսական եւ քահանայական կարգէն: Գէորգ Եպ. կը ծանուցանէ զայս Պոլսոյ Պատրիարքին, Պատրիարքն ալ կը հրամայէ անոր, որ քաղաքէն չմեկնի, եւ Էջմիածին չերթայ՝ բանադրանքէն արձակուելու: Եւ ինքը Պատրիարքը՝ ստորագրութեամբ Գէորգ Եպ.ի պաշտպան իշխաններուն, Կաթողիկոսէն կը պահանջէ՝ «ոչ թէ ողբանօք ինչ, այլ հրամանաւ իբրու եւ չափազանց բանիւք», ինչպէս կ'ըսէ Սիմէոնի Յիշատակարանը, որ արձակէ զԳէորգ Եպ.: Այս առթիւ, ինչպէս նաեւ Պատրիարքին ուրիշ դիմագարձ վարմանց պատճառաւ՝ Կաթողիկոսին եւ Պատրիարքին մէջ մեծ վէճ մը ծագեցաւ, որ վերջացաւ Կաթողիկոսին մահումբը: Կաթողիկոսը մահուան անկողնոյն մէջ կտակաւ պատուիրեց Եպիսկոպոսներուն՝ որ Գէորգը չարձակեն, մինչեւ որ Էջմիածին գայ: Նալեան Պատրիարք լսելով Կաթողիկոսին մահը՝ Գէորգ Եպ.ին թուղթ մը կը գրէ, թէ ինքը կ'արձակէ զանիկայ բանադրանքէ, ըսելով թէ անկարելի էր որ Կաթողիկոսը մահուան վայրկենին զանիկայ չարձակէր, ուստի եւ կը հրա-